



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ 2048 1 31 10 2014թ.

ՀՐԱՄԱՆ

ԵՊՀ սովորողի էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման և օգտագործման կանոնները հաստատելու մասին

Նպատակ ունենալով կանոնակարգել ԵՊՀ սովորողներին տրվող էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրման և օգտագործման գործընթացը՝ հրամայում եմ.

1. Հաստատել ԵՊՀ սովորողի էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման և օգտագործման կանոնները (կցվում է):
2. ԵՊՀ սովորողի էլեկտրոնային փոստի հասցեների համակարգի ներդրման նպատակով հանձնարարել.
 - ԵՊՀ ֆակուլտետների ղեկաններին և կրթական ծրագրեր իրականացնող կենտրոնների ղեկավարներին՝ մեկամսյա ժամկետում ապահովել սովորողներին էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման գործընթացը:
 - ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետին՝ միջոցներ ձեռնարկել էլեկտրոնային փոստի համակարգի հնարավորինս անխափան աշխատանքները ապահովելու ուղղությամբ:
3. Հրամանի կատարման հսկողությունը դնել ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ.Մարկոսյանի վրա:
4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ռեկտոր՝

Ռ. Մարկոսյան

**ԵՊՀ սովորողի էլեկտրոնային փոստի հասցեի
տրամադրման և օգտագործման կանոններ**

1. Ընդհանուր դրույթներ

ԵՊՀ սովորողի էլեկտրոնային փոստի հասցեն տրամադրվում է ԵՊՀ սովորողների էլեկտրոնային փոստի դոմեյնի (ysumail.am) տիրույթում (ֆորմատը՝ anun.azganunxx@ysumail.am): Հասցեն տրամադրվում է նրա ուսումնառության ընթացքում և պահպանվում է ԵՊՀ-ում ուսումնառությունն ավարտելուց հետո: Մույն կանոնները կոպտորեն խախտող սովորողներին կամ շրջանավարտներին, ինչպես նաև ԵՊՀ-ից հեռացված ուսանողներին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեն կարող է կասեցվել: Էլեկտրոնային հասցեն ստանալիս սովորողը ստորագրում է համապատասխան մատյանում:

2. Սոցորողի էլեկտրոնային փոստի հասցեի օգտագործումը

ԵՊՀ սովորողի էլեկտրոնային փոստի հասցեն հանդիսանում է ԵՊՀ սովորողի և համալսարանի միջև հաղորդակցության պաշտոնական խողովակ: Ռեկտորատի, դեկանատի և այլ վարչական ստորաբաժանումների կողմից սովորողի էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրությունների առաքումը հանդիսանում է սովորողին պաշտոնական ծանուցման եղանակ:

Սովորողի էլեկտրոնային փոստի հասցեատիրոջ անվանումը և գաղտնաբառը կարող են օգտագործվել նաև համալսարանի տեղեկատվական այլ համակարգեր մուտք գործելու նպատակով՝ ձևավորելով մեկ միասնական ներհամալսարանական տեղեկատվական համակարգ:

Սովորողը պարտավոր է իրեն տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեն օգտագործել կրթական նպատակներով և խուսափել ժամանցային ինտերնետային կայքերում այն օգտագործելուց:

3. Հասցեի տրամադրում և անվանում

Էլեկտրոնային փոստի հասցեն տրամադրվում է ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կողմից ֆակուլտետների դեկանատների (կենտրոնների) միջոցով: Էլեկտրոնային փոստի հասցեն (օգտագործողի անվանումը, որը նախորդում է «@ysumail.am» հատվածին) գնեքացվում է սովորողի անվան և ազգանվան միջոցով, իսկ համընկնման դեպքում տրվում է հերթական համարը:

4. Գաղտնաբառ

Ժամանակավոր գաղտնաբառը գեներացվում է ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կողմից, որը սովորողը պարտավոր է փոփոխել էլեկտրոնային հասցեից օգտվելու առաջին շաբաթվա ընթացքում: Խորհուրդ է տրվում ընտրել այնպիսի գաղտնաբառ, որը բաղկացած կլինի առնվազն 7 նիշից, որտեղ միաժամանակ առկա կլինեն ինչպես լատիներեն տառեր, այնպես էլ թվեր: Պետք չէ ընտրել օգտագործողի անվան հետ համընկնող կամ պարզ (հեշտ գուշակվող) համադրումներից բաղկացած գաղտնաբառեր: Սովորողը էլ. փոստի գաղտնաբառն իրավունք չունի փոխանցելու այլ անձանց: Համակարգի հետ տեխնիկական խնդիրներ ունենալու դեպքում սովորողը պետք է դիմի ֆակուլտետի ղեկնաստ:

5. Աշխատանք համակարգում

Էլեկտրոնային փոստի կայք մուտք գործելու համար պետք է այցելել էլեկտրոնային փոստի մուտքի էջ, որի համապատասխան հղումն առկա է նաև ԵՊՀ պաշտոնական կայքէջում: Էլ. փոստի մուտքի էջի հասցեն է՝ mail.yso.am: Էլեկտրոնային փոստի մուտքի էջից սովորողի էլեկտրոնային փոստի անհատական էջ մուտք գործելու համար սովորողը պետք է ընտրի ysumail.am դոմեյնը, այնուհետև մուտքագրի օգտագործողի անվանումն ու գաղտնաբառը և կատարի փոստարկղ մուտք գործելու հրահանգը:

6. Փոստարկղի ծավալներ

Ներկայումս էլ. փոստի հասցեի փոստարկղի ընդհանուր ծավալը (այդ թվում՝ ուղարկված նամակներ, պահպանված նամակներ և այլն) սահմանված է 200 Mb: Մեկ ուղարկվող նամակը կարող է ունենալ կցված ֆայլեր, որոնց ընդհանուր ծավալը չի գերազանցում 25 Mb ծավալը: Ստացվող մեկ նամակի ծավալը չպետք է գերազանցի 50 Mb ծավալը: Փոստարկղի սահմանափակումներին չհասնելու և տեղեկատվության հնարավոր կորստի հետևանքները մեղմացնելու նպատակով խորհուրդ է տրվում պարբերաբար հին ստացված և ուղարկված նամակները պահել Ձեր անձնական համակարգչում՝ մշտապես ազատ պահելով էլ. փոստի փոստարկղերը:

7. Տարբեր ծրագրային գործիքների միջոցով էլ. փոստի հասցեի օգտագործում

ԵՊՀ էլեկտրոնային փոստի սերվերն ապահովում է էլեկտրոնային փոստի հեռավար մուտքի և օգտագործման POP3 ստանդարտը (Post Office Protocol Version 3): Այն հնարավորություն է ընձեռում մի շարք ծրագրային գործիքների միջոցով, օրինակ՝ Outlook express ծրագրով, արագ ստուգել էլեկտրոնային փոստը, ուղարկել նամակներ, ստացված նամակները ներբեռնել անհատական համակարգիչ: Խորհուրդ է տրվում էլ. փոստի հասցեի օգտագործման ընթացքում կիրառել նմանօրինակ գործիքներ: